

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

1963-1964 ԹԹ. ԿԻՊՐՈՍՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Անգլիական գաղութային իշխանության դեմ Կիպրոսի ժողովրդի երկարատև և համառ պայքարի արդյունքում Յյուբիխում, իսկ այնուհետև Լոնդոնում տեղի ունեցած բանակցություններից հետո 1959 թ. փետրվարի 19-ին ստորագրվեց համաձայնագիր, որը հռչակում էր Կիպրոսի անկախ հանրապետության հիմքերը¹: Համաձայնագիրը բաղկացած էր Անգլիայի, Հունաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք «երաշխիքային» պայմանագրից, Կիպրոսի հանրապետության, Հունաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք «միասնության» մասին պայմանագրից, իշխանությունը Կիպրոսի կառավարությանը փոխանցելու անգլիական կառավարության դեկլարացիայից, ապագա Կիպրոսի հանրապետության պետական հիմք հանդիսացող սահմանադրությունից, պայմանագրին մասնակից երկրների կողմից համաձայնեցված գործողություններ կատարելու մասին հայտարարության և մի շարք այլ փաստաթղթերից²:

1959թ. դեկտեմբերի 13-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններ: Նախագահ ընտրվեց ազգությամբ հույն Մակարիոսը, իսկ փոխնախագահ՝ ազգությամբ թուրք Քյուլյուքը³:

1960 թ. օգոստոսի 16-ին անգլիական վերջին նահանգապետ Ֆուտըլքեց կղզին և նախագահ Մակարիոսն ու փոխնախագահ Քուլյուքը Նիկոսիայում ստորագրեցին Կիպրոսի հանրապետության անկախության հռչակագիրը: Միաժամանակ ստորագրվեցին «երաշխիքների» և «միասնության» մասին պայմանագրերը և Կիպրոսի հանրապետության սահմանադրությունը, որը ուժի մեջ մտավ ստորագրման պահից: Սա անկասկած առաջընթաց քայլ էր Անգլիայի գաղութ հանդիսացող Կիպրոսի պատմության մեջ, անկախ այն բանից, թե ինչպիսի հանրապետություն էր պարտադրվել կիպրոսցիներին: Մակայն իրականում այս անկախության հռչակագիրը լիարժեք անկախություն չբերեց Կիպրոսին, այն միայն որոշ չափով ներքին ինքնավարություն տվեց նորաստեղծ հանրապետությանը: Ինչպես հետագայում Մակարիոսն էր ճշում. «Ես ամենևին էլ համաձայն չէի Լոնդոնյան պայմանագրի դրույթների հետ, սակայն ստո-

րագրեցի այն միայն ելնելով ժամանակի պահանջից՝ չունենալով այլ-լընտրանք»⁴։ Պետք է նշել, որ 1958-59 թթ. Կիպրոսի հարցի շուրջ Հունաստանի և Թուրքիայի միջև օրեցօր աճող լարվածության հետևանքով, երբ փլուզման շեմին էր կանգնած ՆԱՏՕ-ի հարավ-արևելյան թևը, և երբ հարցը ՄԱԿ-ի քննարկման առարկան դարձնելու ռեալ սպառնալիք կար, ԱՄՆ-ն սկսում է ճնշումներ գործադրել Հունաստանի և Թուրքիայի վրա պահանջելով նրանցից շուտափույթ համաձայնության գալ հարցի վերաբերյալ՝ ՆԱՏՕ-ի «ընտանեկան» շրջանակներում։

Թուրք-հունական կոմպրոմիսը ձեռք բերվեց արդեն 1958թ. վերջերին՝ առանց կիպրոսցիների կարծիքը հաշվի առնելու, և, ինչպես սպասվում էր, այն արտահայտում էր ՆԱՏՕ-ի շահերը տարածաշրջանում։ ՌԻՀագրավ է նաև այն փաստը, որ Լոնդոնյան համաձայնագրի ստորագրումից առաջ հունական իշխանությունները զգուշացրեցին Մակարիոսին, որ եթե վերջինս հրաժարվի փաստափուլից ստորագրելուց, ապա նա կզրկվի Հունաստանի աջակցությունից, իսկ պայմանագիրը կստորագրվի առանց նրա մասնակցության։ Նմանատիպ ճնշումներ գործադրվեցին նաև թուրքական համայնքի վրա։ Բացի այն, որ երաշխիքների և միասնության մասին պայմանագրերի համաձայն Անգլիան, Թուրքիան և Հունաստանը երաշխավոր պետությունների պատրվակով իրենց իրավունք էին վերապահում «աներաժեշտության դեպքում» միջամտել Կիպրոսի ներքին գործերին, նորաստեղծ հանրապետության եռամյա փորձը ցույց տվեց, որ սահմանադրության մեջ գոյություն ունեն մի շարք թերություններ, որոնք արգելք են հանդիսանում պետական առանձին հիմնարկների բնականոն գործունեությունը և խանգարում են երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային առաջընթացին։

Եվ իրոք, լորդ Ռեդկլիֆի գլխավորությամբ անգլիացի մի խումբ իրավաբանների կողմից մշակված⁵ և Կիպրոսի հանրապետությանը պարտադրված սահմանադրության ուսումնասիրությունից ակնհայտորեն ի հայտ է գալիս երկու համայնքների տարանջատման և միմյանց հակադրման միտումը, ինչը միջհամայնքային տարածայնությունների աղբյուր էր հանդիսանում և լարվածության մթնոլորտ է ստեղծում հանրապետության ողջ տարածքում։ Սա ամենևին էլ պատահականություն չէր։ Հերթական անգամ օգտագործելով «Փաժանիր և տիրիր» իր շատ սիրելի սկզբունքը, անգլիական դիվանագիտությունը փորձում էր, համայնքների միջև առկա լարվածության պայմաններում դատավորի դերում հանդես գալով, հիմնավորել և ամրապնդել իր ներկայությունը Կիպրոսում, դրանով իսկ վերահսկողության տակ պահելով իրավիճակը։

Նախ նշենք, որ սահմանադրության համաձայն երկրի և՛ նախագահը, և՛ փոխնախագահը հավասարապես օժտված էին վետոյի իրավունքով. սա նշանակում է, որ նախագահը միանձնյա չէր կարող ոչ մի ո-

բոշում ընդունել, առանց այն փոխնախագահի հետ համաձայնացնելու: Փոխնախագահ Քույրըը հետագայում այս կապակցությամբ գրում էր. «Եթե նախագահի ձեռքում հանրապետության ղեկն էր, ապա իմ ձեռքում՝ արգելական սեղանկը»⁶: Այսպես, օրինակ, բանակի մասին օրենքի ընդունման ժամանակ փոխնախագահը, օգտվելով իր վետոի իրավունքից, կասեցրեց միասնական բանակի մասին օրենքի ընդունումը և պահանջեց անջատ ստեղծել թուրքական և հունական ստորորաժամույններ⁷:

Ոչ պակաս դժվարություններ կային նաև օրենսդրական դաշտում: Օրենսդիր մարմինը՝ պառլամենտը բաղկացած էր 50 պատգամավորից, որոնցից 35-ը հույներ էին, իսկ 15-ը՝ թուրքեր: Օրենքները ընդունվում էին յուրաքանչյուր համայնքի պատգամավորական խմբի առանձին քվեարկության արդյունքում, ձայների պարզ մեծամասնությամբ, այսինքն, օրենքի նախագծի քվեարկության ժամանակ կողմ քվեարկած 35 հույն և 7 թուրք պատգամավորների ձայների դեպքում դեմ քվեարկած ընդամենը 8 թուրք պատգամավորները կարող էին տապալել օրենքի ընդունումը: Հաճախ երկրի համար կենսական նշանկություն ունեցող մի շարք օրենքներ չէին ընդունվում առանձին պատգամավորների քննադատության պատճառով, ինչպես, օրինակ, հայտարարեցին թուրք պատգամավորներից մեկը. «Մեր ձայների դիմաց մենք պետք է որևէ բան ստանանք, հակառակ դեպքում մենք ուղղակի չենք տա այդ ձայները»⁸:

Դատական համակարգի գործունեությունը սահմանադրությամբ հետևյալ կերպ էր կարգավորվում՝ դատավորներ կարող էին լինել և՛ հույները, և՛ թուրքերը, որոնցից սակայն յուրաքանչյուրը իր լիազորությունները կարող էր իրականացնել միայն իր ազգությանը պատկանող քաղաքացիների նկատմամբ: Բավական է միայն վերցնել ամենաթեթև գործը, երբ հայցվորն ու պատասխանողը տարբեր ազգերի ներկայացուցիչներ են, առաջանում էր դատը երկու դատավորներով վարելու դժվարություն, ինչը մույնպես բարդություններ էր առաջացնում:

Անկասկած, թերություն էր նաև այն փաստը, որ սահմանադրությամբ տեղական ինքնակառավարման մարմինները, հատկապես խոշոր քաղաքներում տարանջատված էին ըստ համայնքների, այսինքն, միաժամանակ գործում էին երկու իրարից անկախ քաղաքապետարաններ, ինչը խոչընդոտում էր քաղաքների արդյունավետ կառավարման գործընթացին, եթե հաշվի առնենք, որ հիմնականում քաղաքներին բնորոշ էր բնակչության խառը կազմը:

Սահմանադրությունը տարանջատում էր ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինները, այլ նաև բանակը, ոստիկանությունը, կրթական, մշակութային և պետական հիմնարկները՝ 70:30, իսկ առանձին դեպքերում նաև 60:40 հարաբերակցությամբ⁹: Այս ամենը անկասկած

խանգարում էր երկրի բնականոն զարգացմանը, երկու համայնքների մերձեցմանը և միջհամայնքային տարաձայնությունների աղբյուր էր հանդիսանում:

Բոլոր այս թերությունները շուտով իրենց զգացնել տվեցին: «Լարվածությունը երկու համայնքների միջև 1963թ. սկզբին արդեն այնքան է հասնումացել, որ արտաքին միջամտություն է պահանջում».-գրում էր թուրքական մամուլը¹⁰: Ստեղծված իրավիճակը շտկելու նպատակով նախագահ Մակարիոսը փոխնախագահ Քույուքին առաջարկեց սահմանադրության զոնե որոշ կետերում փոփոխություններ կատարել և 1963 թ. նոյեմբերի 30-ին ներկայացրեց 13 կետից բաղկացած սահմանադրական փոփոխությունների մի ծրագիր¹¹: Նա գրում էր, որ հավատում է բոլոր այն մարդկանց բարի մտադրություններին, ովքեր Յուրիխում և Լոնդոնում համաձայնագրեր էին ստորագրում հանուն անկախ հանրապետության ստեղծման:

Մակայն այս պետությունը կարևոր դեր և նշանակություն ուներ ՆԱՏՕ-ի համար և յուրաքանչյուր փոփոխություն որը կարող էր ամրապնդել նորաստեղծ պետության հիմքերը և թուլացնել վերահսկողության մեխանիզմները, բնական է, որ չէր կարող ընդունվել ՆԱՏՕ-ի անդամ պետություններ, մասնավորապես, Թուրքիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի կողմից: Ուստի պատահական չէր, որ Մակարիոսի առաջարկին առաջինը բացասական արձագանքով հանդես եկավ ոչ թե թուրքական համայնքը, այլ հենց Թուրքիան, որը բարեփոխումների մեջ տեսնում էր թուրք փոքրամասնության շահերի ոտնահարման միտում և էնոսիսի՝ իրականացման նախադրյալներ:

1963թ. դեկտեմբերի 7-ին թուրքական կառավարությունը պաշտոնապես մերժեց Մակարիոսի առաջարկը¹², որին հետևեց նաև թուրքական համայնքի բացասական պատասխանը:

Բարեփոխումների ծրագիրը թեպետ վերաբերվում էին զուտ Կիպրոսի ներքաղաքական կյանքին, սակայն Անգլիան և ԱՄՆ-ն մույնպես դրանում մտավախություն էին տեսնում կապված նախ ՆԱՏՕ-ի համընդհանուր, ապա իրենց անմիջական շահերի հետ (այստեղ գտնվող անգլիական ռազմաբազաները և ամերիկյան ռադիոկայանները):

Ուստի, բարեփոխումների կուրսից նախագահ Մակարիոսին շեղելու և երկրի ներքին գործերին միջամտելու համար «երաշխիքային» պայմանագիրը գործնականորեն փորձարկելու նպատակով անհրաժեշտ էր լարվածության նոր օջախ ստեղծել Կիպրոսում: Դա քաջ գիտակցում էին անգլո-ամերիկյան ռազմագետները, և իսկույն գործի անցան: Գաղտնի ծառայությունների միջոցով կապեր հաստատելով ինչպես թուրք, այնպես էլ հույն ծայրահեղականների և տեռորիստական կազմակերպությունների հետ, սկսեցին ակտիվորեն զինել նրանց: Ընդ

որում, զենք մատակարարվում էր Կիպրոսում տեղակայված անգլիական ռազմական ջանքերից: Գրանցվել են անգամ դիպքեր, երբ անգլիացի զործակալները բռնվել են զենք փոխանցելու պահին¹³:

Անգլիական զադտնի ծառայությունների ձեռնարկած միջոցառումների արդյունքները երկար սպասեցնել չտվեցին: Լարվածությունը համայնքների միջև զմալով աճում էր, և արդեն առաջին միջադեպը տեղի ունեցավ 1963թ. դեկտեմբերի 21-ին Նիկոսիայի մերձակայքում, երբ թուրք ծայրահեղականները հարձակվեցին հույն ոստիկանների վրա: Բռնկված փոխերաձգության ժամանակ երկու թուրք սպանվեց: Այդ միջադեպը էլ ավելի սրեց առանց այդ էլ լարված իրավիճակը: Նույն օրը Մակարիոսն ու Քուչուքը դիմեցին կիպրոսցիներին, կոչ անելով ցուցաբերել զսպվածություն, կարգ ու կանոն պահպանել և չտրվել սադրանքներից, սակայն ապարդյուն. ընդամենը մի քանի օր անց միջհամայնքային արմատախիզ պատերազմը ընդգրկել էր ողջ կղզին:

1963 թ. դեկտեմբերի 24-ին Անգլիան, Թուրքիան և Հունաստանը, օգտագործելով երաշխավոր-պետությունների իրենց իրավունքները, դիմեցին Կիպրոսի կառավարությանը և հունական ու թուրքական համայնքներին պահանջելով վերջ տալ անկարգություններին¹⁴:

Սակայն դեկտեմբերի 25-ին ամսպասելիորեն, Կիպրոսում տեղակայված թուրքական զորքերը դուրս եկան իրենց զորամասերից և միացան թուրք ծայրահեղականներին: Նրանց հաջողվեց պայքարելով հույների ոչ կանոնավոր ջոկատների դեմ, ետ մղել մրանց դեպի Նիկոսիայի հարավային շրջաններ՝ զրավելով ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Նիկոսիա-Կիրինեյա մայրուղին: Ի պատասխան սրան Կիպրոսի կառավարության խնդրանքով հունական ստորաբաժանումները մույնպես դուրս եկան իրենց ռազմական ջանքերից և միացան հույներին՝ թուրքական հարձակումներին դիմակայելու մպատակով: Իսկական մի պատերազմ էր ծավալվել թուրքական և հունական զորաջոկատների միջև, որը սպառնում էր վերածվել Թուրք-Հունական պատերազմի: Թեպետ հետագայում Թուրքիայի վարչապետ Ինյոնյուն պնդում էր, որ թուրքական զորքերը ինքնազուխ են լքել զորամասերը, տեսնելով, թե ինչպես են իրենց աչքի առաջ մոթում իրենց ազգակիցներին¹⁵, սակայն մրանց զործողություններից կարելի է ենթադրել, որ մրանք գործել են Անկարայի ամմիջական հրահանգով և մպատակ ունեին մախսապայմաններ ստեղծել կղզու բաժանման համար: Դա է վկայում այն փաստը, որ թուրքական զորքերը թուրք ազգաբնակչությանը բռնի կերպով տեղափոխում էին թուրքաբնակ տարածքներ, ինչպես նաև այն, որ ստրատեգիական տեսակետից մրանք այնպիսի դիրք էին զրվել, որը հնարավորություն էր տալիս յրսից թուրքական զորքերի ներխուժման դեպքում ապահովել մրանց թիկունքը:

Եվս ոչ առանց Անկարայի մասնակցության իրենց պաշտոններից ի նշան բողոքի, ցուցադրական հրաժարվեցին փոխնախագահ Քուլուբը, կառավարության անդամ 3 թուրք նախարարները և բարձրաստիճան աշյ պաշտոնյաներ: Արդեն պարզ ուրվագծվում էին Կիպրոսի բաժանման վերաբերյալ Թուրքիայի ունեցած ծրագրերը:

1963 թ. դեկտեմբերի 25-ին Թուրքիան պաշտոնապես հայտարարեց Կիպրոսում տեղի ունեցող իրադարձություններին անգլիական, թուրքական և հունական զորքերի անհապաղ միջամտելու անհրաժեշտության մասին¹⁶:

Դեկտեմբերի 26-ին Թուրքիայում, նախագահի և վարչապետի մասնակցությամբ, տեղի ունեցան բարձրաստիճան հրամանատարական կազմի խորհրդակցություններ, որտեղ որոշում ընդունվեց զորքեր ուղարկել Կիպրոս: Նույն օրը վարչապետ Ինյոնյուն ելույթ ունենալով պառլամենտում, պատգամավորների բոլոր ծափահարությունների ներքո հայտարարեց. «Մենք մեր զորքերը ուղարկում ենք Կիպրոս: Մեր ռազմականները կուղևորվեն Կիպրոսի ափերի մոտ և կսպասեն այնտեղ հետագա գործողությունների հրամանին»¹⁷: Իսկ նախագահն այս գործողությունները հիմնավորելու նպատակով նույն օրը նամակով դիմեց ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Հունաստանի նախագահներին հայտնելով, որ իբրև թե Կիպրոսում իսկական մի ցեղասպանություն է իրագործվել թուրք ազգաբնակչության նկատմամբ¹⁸: Ինչպես երևում է, Թուրքիան նախադրյալներ էր ստեղծում Կիպրոս ներխուժելու և իր այդ քայլը արդարացնելու համար:

Կանգնելով թուրքական ազդեսիայի վտանգի առաջ դեկտեմբերի 26-ին ՍԱԿ-ում Կիպրոսի մշտական ներկայացուցիչը բողոք հղեց Գլխավոր Զարտուղարին պահանջելով Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ հրավիրել կապված Թուրքիայի կողմից Կիպրոսի ներքին գործերին միջամտելու հարցի հետ: Ի պատասխան այս քայլին Կիպրոսի իշխանություններին ահաբեկելու նպատակով, Թուրքիան ռազմական ուժի ցուցադրական գործողություններ սկսեց իրականացնել Կիպրոսի ափերի մոտ:

Դեկտեմբերի 27-ին ՍԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը սկսեց Կիպրոսի շուրջ ստեղծված իրավիճակի հարցի քննարկումը¹⁹:

Հարցի քննարկումը ՍԱԿ-ում խիստ անհանգստություն առաջացրեց ոչ միայն Թուրքիայի, այլ նաև ԱՄՆ-ի և Անգլիայի մոտ, որոնք աշխատում էին խուսափել ՍԱԿ-ի միջամտություններից, և հարցի քննարկումները իրականացնել ՆԱՏՕ-ի շրջանակներում, որտեղ իրենց ազդեցության միջոցները անհամեմատ շատ էին:

Այդ կապակցությամբ իսկույն գործի անցավ անգլիական դիվանագիտությունը: Դեկտեմբերի 25-ին անգլիական կառավարությունը

Մակարիսիին առաջարկեց որպես ժամանակավոր միջոց կարգուկանոնը վերականգնելու նպատակով Կիպրոսում օգտագործել Յուրիխ-Լոնդոնյան համաձայնագրերով այստեղ գտնվող անգլիական, հունական և թուրքական զորքերը, որոնք պետք է դրվեին անգլիացի զինեռալ Յանգի ենթակայության տակ: Շարունակվող թուրքական ներխուժման վտանգի պայմաններում դեկտեմբերի 27-ին Մակարիոսը ստիպված եղավ ընդունելու այս առաջարկը: Ստորագրված համատեղ հայտարարագրի մեջ ասվում էր, որ այս զորքերը պետք է աջակցեն Կիպրոսի իշխանություններին խաղաղությունն ու կարգ ու կանոնը վերականգնել գործում²⁰:

Դեկտեմբերի 28-ին Նիկոսիա ժամանեց Մեծ Բրիտանիայի Համագործակցության հարցերով նախարար Դանկեն Մենդիսը՝ ստեղծված իրավիճակը Կիպրոսի կառավարության հետ քննարկելու նպատակով: Բանակցությունների արդյունքում նրա նախաձեռնությամբ դեկտեմբերի 29-ին ստեղծվեց Քաղաքական կապերի հատուկ կոմիտե, որի մեջ ընդգրկվեցին Կիպրոսում Միացյալ Թագավորության զերագույն կոմիսարը, Հունաստանի և Թուրքիայի դեսպանները և հունական ու թուրքական համայնքների ներկայացուցիչները: Այս կոմիտեի ստեղծման նպատակը ճգնաժամային իրավիճակից շուտափույթ կարգավորումն էր: Կոմիտեի աշխատանքների արդյունքում մույն օրը կողմերի միջև զինադադարի համաձայնություն ձեռք բերվեց: Դեկտեմբերի 30-ին Մենդիսի առաջարկով, նոր ընդհարումներից խուսափելու նպատակով, Հատուկ կոմիտեն որոշում ընդունեց Նիկոսիայում թուրքական և հունական կողմերի միջև չեզոք գոտի ստեղծելու մասին, որը կոչվեց «կանաչ գոտի»²¹: Շուտով նման գոտիներ ստեղծվեցին նաև մյուս խոշոր քաղաքներում: Փաստորեն տեղի ունեցավ քաղաքների արհեստական բաժանում:

Մենդիսի առջև դրված մյուս կարևոր խնդիրն այն էր, որ ամեն գնով ստիպել Մակարիոսին հրաժարվել ՄԱԿ-ում հարցի քննարկումից և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ խնդրի կարգավորման նպատակով կոնֆերանս հրավիրել Լոնդոնում: Այդ կապակցությամբ Մակարիոսի վրա ճնշումներ սկսեցին գործադրվել պահանջելով նրա համաձայնությունը, ընդ որում հասկացնում էին, որ բացասական պատասխանը կհանգեցնի նոր բարդությունների՝ ընդհուպ մինչև թուրքական զորքերի ներխուժումը Կիպրոս²²: Թեպետ և՛ Անգլիան, և՛ ԱՄՆ-ն չէին ողջունում Թուրքիայի նման ծայրահեղ քայլերը, քանի որ գիտակցում էին, որ դրանք կարող են հանգեցնել ՆԱՏՕ-ի երկու անդամ պետությունների՝ Հունաստանի և Թուրքիայի միջև պատերազմի առաջացմանը, սակայն առիթը բաց չէին թողնում այդ փաստը Կիպրոսի վրա ճնշում գործադրելու համար օգտագործելու առումով:

1964 թ. հունվարի 2-ին, ստանալով Սակարիոսի համաձայնությունը, Լոնդոնում հրավիրվեց կոնֆերանս Անգլիայի, Թուրքիայի, Հունաստանի և Կիպրոսի երկու համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կոնֆերանսը իր աշխատանքները սկսեց հունվարի 15-ին: Նիստը նախագահող անգլիական նախարար Սենդիսը քննարկման ներկայացրեց խնդրի կարգավորմանն ուղղված իր ծրագիրը³: Այն ընդգրկում էր հետևյալ առաջարկները՝ խաղաղության պահպանման նպատակով միջազգային խաղաղարար ուժերի ստեղծում, որոնց կարող էին մասնակցել ցանկություն հայտնած բոլոր երկրների զինված ստորաբաժանումները: Այս գործերի առկայությունը Կիպրոսում ոչ մի ձևով չպետք է անդրադառնար Անգլիայի, Թուրքիայի և Հունաստանի կառավարությունների իրավունքների և պարտականությունների վրա Կիպրոսում:

Բոլոր վիճելի հարցերի լուծումը միայն ու միայն կոնֆերանսին մասնակից կողմերի համատեղ ջանքերով:

Անգլիայի, Թուրքիայի, Հունաստանի և երկու համայնքների ներկայացուցիչների համաձայնությամբ ՍԱԿ-ի հատուկ միջնորդի նշանակում, որը պարբերաբար պետք է տեղեկացներ ՍԱԿ-ի Գլխավոր Քարտուղարին Կիպրոսում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Վերոնշյալի առիթով Կիպրոսի ներկայացուցիչը ՍԱԿ-ում պետք է հանդես գար Անվտանգության Խորհրդի միատույն և հայտարարել, որ լիովին համաձայն է Լոնդոնի կոնֆերանսի արդյունքների հետ²³:

Հարցի հետագա քննարկումների համար Լոնդոնում պետք է ստեղծվեր եռակողմ միջպետական հանձնաժողով՝ առանց Կիպրոսի կառավարության մասնակցության:

Սենդիսի այս ծրագիրը, որը բացի կղզու օկուպացումից խնդրի կարգավորմանն ուղղված ոչ մի ռեալ առաջարկ չէր պարունակում, մերժվեց Սակարիոսի կողմից, սակայն Թուրքիան, Հունաստանը և թուրքական համայնքը ընդունել էին այն²⁴:

Ստանալով վերջիններիս համաձայնությունը Անգլիան իսկույն դիմեց ՆԱՏՕ-ի անդամ երկրներին առաջարկելով զինված ստորաբաժանումներ տրամադրել միջազգային խաղաղարար ուժերի համար:

1964 թ. հունվարի 30 -ին ԱՄՆ-ի նախագահ Ջոնսոնը պաշտոնապես հայտարարեց միջազգային խաղաղարար ուժերին մասնակցելու ցանկություն մասին, այդ նպատակով առաջարկելով ՆԱՏՕ-ի անդամ պետությունների զորքերից կազմված տասնհազարանոց մի զորաջուկատ²⁵, ինչի կապակցությամբ Եվրոպայում ՆԱՏՕ-ի զորքերի հրամանատար Լեմինտցերին գործուղեց Աթենք և Անկարա մասնակցության պայմաններին ծանոթանալու համար:

1964թ. փետրվարի 2-ին Սենդիսի առաջարկը վերջնագրային տեսքով հանձնվեց Կիպրոսի կառավարությանը:

Կիպրոսի համար ստեղծված այս ծանր պայմաններում ճգնաժամի վերաբերյալ իր դիրքորոշմամբ հանդես եկավ ԽՍՀՄ-ը, որը մինչ այդ ուշադիր հետևում էր կատարվող իրադարձություններին: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում էր. «ԽՍՀՄ-ը ողջունում է անկախության համար մղվող Կիպրոսի ժողովրդի արդարացի պայքարը և դատապարտում որևէ օտարերկրյա միջամտություն նրա ներքին գործերին: ՆԱՏՕ-ի ագրեսիայի վտանգը սպառնալիք է ոչ միայն կիպրոսցիների, այլ նաև բոլոր ազատասեր ժողովրդների համար, և հակառակում է ՄԱԿ-ի կանոնադրությանը: Ուստի ԽՍՀՄ-ը չի կարող անտարբեր մնալ այս ամենից, և առաջարկում է հարցի կարգավորումը իրականացնել ՄԱԿ-ի շրջանակներում»²⁶:

Սառը պատերազմի տարիներին, երբ հակադիր ճամբարների միջև ամհաշտ մրցակցություն էր գնում ագրեսիայի ուղղությունից ընդլայնման համար, որի արդյունքում միջազգային քաղաքական իրավիճակը ծայրաստիճան լարված էր, ԽՍՀՄ-ի այս դիրքորոշումը չէր կարող անտեսվել ՆԱՏՕ-ի կողմից, պատահական չէ որ դրանից ոգեշնչված մի քանի օր անց Մակարիոսը մերժեց ՆԱՏՕ-ի վերջնագիրը:

1964 թ փետրվարի 4-ին Մակարիոսը իր նստավայրում ընդունելով ԱՄՆ-ի և Անգլիայի ներկայացուցիչներին, և գրավոր ձևով հանձնեց նրանց իր պատասխանը: Պատասխանում ասվում էր, որ միջազգային խաղաղարար ուժերի կազմավորման իրավունքը պատկանում է Անվտանգության խորհրդին, որն էլ և առաջատար է հանդիսանում Կիպրոսի խնդրի կարգավորման գործում²⁷:

Անվտանգության Խորհրդի որոշումը ՄԱԿ-ի խաղաղարար ուժերը Կիպրոս ուղարկելու կապակցությամբ ընդունվեց 1964 թ մարտի 4-ին: Առաջին հինգհազարանոց ստորաբաժանումը շվեդական, դանիական և իռլանդական զորքերի մասնակցությամբ, հնդիկ զենքերալ Գիանիի հրամանատարությամբ²⁸ Կիպրոս ժամանեց մարտի 14-ին, որից հետո իրավիճակը համեմատաբար կայունացավ: Մակայն այս կայունությունը ժամանակավոր էր: Իրավիճակի վերստին սրմանը նպաստում էին կողմերի փոխադարձ մեղադրանքները մեկմեկու. թուրքական կողմը մասնավորապես հույներին մեղադրում էր էմգիսին ուղղված գործողությունների իրականացման մեջ, ինչը իբրև թե խախտում էր «1960թ-ի պայմանագրերով երկու կողմերի միջև ձեռք բերված համաձայնագրերը»²⁹:

Խնդիրը լուծված չէր, իսկ պայքարը Կիպրոսի համար շարունակվում էր:

KAZARYAN ARTUR

CYPRUS CRISIS IN 1963-64 YEARS

(Summary)

In 1960 as a result of the long lasted struggle of the cypriots against the english domination the Independent Republic of Cyprus was created. But the independence of Cyprus was not complete, because according to the signed treaty Cyprus was under the supervision of England, Turkey and Greece. Internal political situation was becoming complicated owing to the disagreements between the two communities (greek and turkish) caused by the imperfection of the Constitution. In 1963 an armed conflict took place between the two communities. The crisis of Cyprus became the subject of discussion among the UN, England, Turkey and Greece, which undertook a conference in London to solve of the problem. But the conference failed to achieve positive results. The tension was alleviated in only 1964 after intervention of the peace-maker forces of UN in accordance with appropriate UN resolutions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Sebahattin Özel "Birinci Dünya Savaşı ve Milli Kurtuluş Savaşları ile Sonrasında Kıbrıs Türklerinin Genel Durumu", "Dünden Bugüne Kıbrıs Meselesi", İstanbul 2001, s. 169
2. Леонидов С. М. «Кипр в борьбе за независимость». М. 1982г. с. 91-92.
3. Վիպրոուի սահմանադրության համաձայն երկրի մայրաքաղաքը է լինելը հույն, և ընտրվել հունական համայնքի կողմից, իսկ փոխմայրաքաղաք՝ թուրք, և ընտրվել համապատասխանաբար թուրքական համայնքի կողմից:
4. Стл' ООН. Совет Безопасности. Официальные отчеты. 19 год. 1098 заседание 27 февраля, 1964г. Нью-Йорк, 1964, стр. 12.
5. Шмаров В. А. Кипр в средиземноморской политике НАТО. М. 1982г. стр 46
6. Ст'у Анисимов Л. Н. Проблема Кипра. Исторический и международно-правовой аспекты. М. 1986г. стр. 40.
7. Lerodiakou L. The Cyprus question. Stokholm. 1971 p. 233.
8. ООН. Совет Безопасности. Официальные отчеты. 18 г. 1085 заседание 27 декабря 1963г. Нью-Йорк, 1963г, стр. 5.
9. Ahmet C. Gazioğlu "Kıbrıs Sorunu, Ortaklık Cumhuriyeti ve AB Üyelğinin Girişimlerinin Siyasi ve Hukuki Yönleri", İstanbul 2001, s. 269
10. <Akis> 05. 01. 1963
11. Cyprus. The Problem in perspektiv. Nikosia. 1968. p. 7. Էնոսիս' (հուն. միավորում) Վիպրոուի միավորումը Հունաստանի հետ:
12. Cumhuriet 8 դեկտեմբեր 1963թ
13. Папаиоану Э. Освободительная борьба на Кипре и агрессивная роль англо-американского империализма. «Проблемы мира и социализма» № 2. 1965, стр. 33.

14. Письмо исполняющего обязанности постоянного представителя Соединенного Королевства Великобритании и Северной Ирландии от 8 января 1964г. ООН. Совет Безопасности. Официальные отчеты 19 год. Док. S/5508. Нью-Йорк, 1964.
15. St'u' ООН. Совет Безопасности. Официальные отчеты. 19 г. 1136 заседание 18 июня 1964г. Нью-Йорк, стр. 22.
16. Поцхверия Б. М. Турция и Кипрский вопрос. «Политика Англии на Ближнем и Среднем Востоке» М. 1966. стр. 421.
17. St'u' İnönü'nün radio konuşması <Forum> № 234. Ankara 1964 s. 6.
18. St'u' birleşik uluşların Cumhurbaşkanımız mesajı.
19. ООН. Совет Безопасности. Официальные отчеты. 18 год. 1085 заседание 27 декабря, 1963г. Нью-Йорк, 1963, стр. 1.
20. ООН. Совет Безопасности. Официальные отчеты. 19 год. Дополнение за январь, февраль, март 1964г. Нью-Йорк, 1964, стр. 10.
21. Поцхверия Б. М. Внешняя политика Турции после второй мировой войны. М. 1976г. стр. 216.
22. ООН. Совет Безопасности. Официальные отчеты. 19 год. 1096 заседание 19 февраля, 1964г. Нью-Йорк, 1964, стр. 4.
23. İbrahim Camli. Duña, Amerika, Türkiye. İstanbul, 1966. s. 29.
24. Cumhuriyet 24. 02. 1964.
25. Кипр. Справочник II-е издание, М. 1986г. стр. 137.
26. Правда 31. 01. 1964г.
27. ООН. Совет Безопасности. Официальные отчеты. 19 год. 1095 заседание 18 февраля, 1964г. Нью-Йорк, 1964, стр. 14.
28. Питер Кальвокоресси, Мировая политика после 1945г. том 1. М. 2000г. стр. 441.
29. Soyalp Tamçelik « Kıbrız ve Avrupa Birliği ilişkileri » «Dünden Bugüne Kıbrız meselesi», İstanbul 2001, s. 173.